

«ՎՏԲ-Նպատակային»

Կուտակային, աճող եկամտաբերությամբ, ամսական կամ ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմամբ

1. Ավանդի համար սահմանվում են հետևյալ ժամկետները և տարեկան տոկոսադրույթները.

Սկզբնական ներդրում/ժամկետ	61 – 90 օր	91 – 180 օր	181 – 270 օր	271 – 365 օր	366-730 օր
ՀՀ դրամ					
10 000 -ից	9.75%	10.50%	10.75%	11.25%	12.00%
100 000 -ից	10.00%	10.75%	11.00%	11.50%	12.5%
1 000 000 -ից	10.50%	11.00%	11.25%	11.75%	12.75%
ԱՄՆ դոլար					
30 -ից	3.00%	3.50%	4.75%	6.75%	7.50%
300 -ից	3.25%	4.00%	5.00%	7.00%	8.00%
3 000 -ից	3.50%	4.25%	5.50%	7.50%	8.50%
Եվրո					
30 -ից	-	2.50%	3.00%	4.00%	5.00%
50 000 -ից	-	2.75%	3.50%	4.50%	5.50%
ՌԴ ռուբլի					
1 000 -ից	-	1.00%	1.50%	1.75%	2.00%
10 000 -ից	-	1.25%	1.75%	2.00%	2.25%
100 000 -ից	-	1.50%	2.00%	2.25%	2.50%

- Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից:
- Ավանդը անսահմանափակ անգամներ լրացուցիչ մուտքագրումներով է և առանց ելքագրումների:
- Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, և ՌԴ ռուբլի արժույթներով:
- Ավանդի ժամկետը ինքնուրույնաբար որոշում է Ավանդատուն՝ 61 օրից մինչև 730 օր:
- Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը.
 - ՀՀ դրամով ավանդների համար՝ 10 000 դրամ, կամ 100 000 դրամ, կամ 1 000 000 դրամ,
 - ԱՄՆ դոլարով ավանդների համար՝ 30 դոլար, կամ 300 դոլար, կամ 3 000 դոլար,
 - Եվրոյով ավանդների համար՝ 30 եվրո կամ 50 000 եվրո,
 - ՌԴ ռուբլով ավանդների համար՝ 1 000 ռուբլի, կամ, 10 000 ռուբլի, կամ 100 000 ռուբլի:
- Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս: Տոկոսագումարը հաճախորդի ցանկությամբ կարող է նաև կապիտալացվել (գումարվել ավանդին) և վճարվել ավանդի ժամկետի ավարտին:
- 180 օր ժամկետից ավել ժամկետով ավանդների համար, եթե ավանդի ներդրման պահին հաճախորդը հայտարարում է, որ հնարավոր է պահանջի ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցում (բայց ոչ շուտ, քան ներդրման օրվանից 90 օր անց), Բանկն ի սկզբանե կնքում է ավանդային պայմանագիր՝ գործող տոկոսադրույթից 1% ցածր տոկոսադրույթով: Հետագայում ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վճարումը կատարում է 90-րդ օրվա համար սահմանված տարեկան տոկոսադրույթով:
- Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև ավանդի մարման ժամկետից 30 օրացուցային օր առաջ:
- Եթե դրամական միջոցների կուտակման արդյունքում Ավանդի գումարը անցնում է ներդրման սահմանաչափի հաջորդ շեմը, ապա Ավանդի դիմաց տոկոսների հաշվեգրումը անցման հաջորդ օրվանից կատարվում է այդ սահմանաչափի համար սահմանված տոկոսադրույթով:
- Ավանդի առավելագույն չափը սահմանվում է մինչև 50.0 մլն ՀՀ դրամ, 100 000 ԱՄՆ դոլար, 50 000 եվրո և 2 500 000 ՌԴ ռուբլի:
- Բանկը Ավանդատունին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման վճար՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
 Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝ Բանկի համապատասխան որոշմամբ:
- Ավանդը (տոկոսային եկամտի հետ միասին) վերադարձվում է պայմանագրով սահմանված ավանդի ժամկետի վերջին օրը, գումարը փոխանցելով Բանկում Ավանդատուի անունով բացված քարտային կամ այլ բանկային հաշվի:
- Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջի դեպքում, Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույթով, վճարված տոկոսագումարների հաշվանցը կատարելով ավանդի գումարից, եթե այդպիսիք եղել են:
- Ավանդի ձևակերպումը իրականացվում է Ավանդատուի՝ իր անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:

«ՎՏԲ-Նպատակային» ժամկետային ավանդը ապահովագրված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով: